

# Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

**1934 մարտ 1** Երևանում վախճանվեց հայ ճարտարապետության պատմության նշանավոր հետազոտող Թորոս Թորամանյանը:

**հուլիս 12** Լույս է տեսնում ՀԿ(բ)Կ Կենտկոմի, Երքաղկոմի և ՀԽՍՀ Կենտգործկոմի օրգան «Կոմունիստ» թերթի առաջին համարը:

**օգոստոս 1** Բացվում է Հայաստանի խորհրդային գրողների առաջին համագումարը:

**օգոստոս 17** Հրավիրվում է ԽՍՀՄ գրողների հիմնադիր առաջին համագումարը, որին մասնակցում էր նաև հայ գրողների պատվիրակությունը:

**սեպտեմբեր 6** Տեղի է ունենում Ղափանի հարստացուցիչ գործարանի հանդիսավոր բացումը:

**սեպտեմբեր 14** ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահության և ժողովնադրության որոշմամբ կազմակերպվում է ՀԽՍՀ ներքին առևտորի ժողովրդական կոմիսարիատ:

**նոյեմբեր 5** Բացվում է Լենինականի մանկավարժական ինստիտուտը:

**նոյեմբեր 29** Տեղի է ունենում Երևան-Քանաքեռ երկարգի հանդիսավոր բացումը:

**1935 փետրվար 10** Ծնվեց թժիշկ, գրող և լրագրող Զորի Բալայանը:

**մարտ 3** Ծնվեց Հրանտ Մաքսոսյանը (գրող, արձակագիր):

**մարտ 15** Ծնվեց Կրկեսի, Էստրադայի և կինոյի հայ դերասան Լեոնիդ Ենգիբարյանը: (Վախճ. 1972թ.-ին):

**մարտ 30** Թիֆլիսում վախճանվեց ականավոր երգահան Ռոմանոս Մելիքյանը: (Վախճ. 1883թ.-ին):

**ապրիլ 1** Երևան է բարձրանում «Պեպո» առաջին հայկական հեռուստ կինոնկարը:

**հունիս 11** Ստեղծվում է ՀԽՍՀ լուսժողկոմատին կից Պատմության ու գրականության ինստիտուտը:

**հունիս 19** Երևանում բացվում է ՀԽՍՀ պետական պատմական թանգարանը:

**հուլիս 14** Տեղի է ունենում ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի (Արմֆամի) հանդիսավոր բացումը:

**օգոստոս 5** Գործարկվում է Լենինականի մսի կոմիտենատը:

**օգոստոս 7** Կիսլովոդսկում վախճանվեց նշանավոր գրող Ալ. Շիրվանզադեն:

(Ծնվ. 1858թ.-ին, Շամախում):

**հոկտեմբեր 22** Փարիզում վախճանվեց Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյանը), աճյունը փոխադրվեց Երևան 1936թ.-ին:

**նոյեմբեր 29** Երևան է ժամանում ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Ի. Կալինինը:

**1936 փետրվար 20** Երևանում վախճանվեց անվանի ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը: (Ծնվ. 1878թ.-ին):

**հուլիս 1** Երևանում վախճանվեց ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Հովհաննես Աբեյսանը:

**հուլիս 9** Թիֆլիսում սպանվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը:

**հուլիս 10** Շահագործման է հանձնվում Երևանի կարբիդի գործարանը:

**նոյեմբեր 19** Բացվում է ՀԽՍՀ խորհուրդների IX արտակարգ համագումարը:

**դեկտեմբեր 5** Շարք է մտնում Քանաքեռգէսը:

**դեկտեմբեր 5** ԽՍՀՄ խորհուրդների VIII արտակարգ համագումարը հաստատում է ԽՍՀՄ նոր սահմանադրությունը: Հայկական ԽՍՀ -ը դառնում է միութենական հանրապետություն:

**1937 մարտ 23** ՀԽՍՀ խորհուրդների IX արտակարգ համագումարը հաստատում է Հայկական ԽՍՀ նոր սահմանադրությունը:

**ապրիլ 24** Հրապարակվում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմը վերացնելու մասին:

**նոյեմբեր 15** Տեղի է ունենում Ստանիլավսկու անվան ուսուական պետական դրամատիկական թատրոնի հանդիսավոր բացումը Երևանում:


**նոյեմբեր 17** Թիֆլիսում վախճանվեց գրող Զակոր Զակորյանը: (Ծնվ. 1866թ.-ին, Գանձակ) Ելիզավետպոլում):

**նոյեմբեր 29** Վախճանվեց հայ բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ և քննադատ Եղիշե Չարենցը: (Ծնվ. 1897թ.-ին):

**1938 հուլիս 12** Բացվում է ՀԽՍՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը:

**հուլիս 18** Ծնվեց արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ Պերճ Զեյթունցյանը:

(Հարունակելի)



**Պուտին. Ռուսաստանը պատրաստ է  
հանդես գալ որպես Լեռնային  
Ղարաբաղի շուրջ Աղբեջանի եւ  
Հայաստանի միջեւ  
համաձայնությունների կատարման  
Երաշխավոր**

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 ՀՈՒԼԻՍԻ,  
ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանը պատրաստ է  
հանդես գալ որպես Լեռնային Ղարաբաղի շուրջ  
Աղբեջանի եւ Հայաստանի միջեւ  
համաձայնությունների կատարման  
Երաշխավոր: Այդ սասին, ինչպես հաղորդել է  
ԻՏԱՌ-ՏԱՍՏ-ը, մամուլի ասուլիսում  
հայտարարել է Ռուսաստանի նախագահ  
Վլադիմիր Պուտինը:

«Փոխգիծումը պետք է ծերք բերվի այդ  
Երկրների ժողովուրդների կողմից, իսկ  
Ռուսաստանը գործընկերների հետ միասին  
պատրաստ է հանդես գալ որպես այդ  
համաձայնությունների կատարման  
Երաշխավոր», - ասել է նա:

Պետության ղեկավարը հիշեցրել է, որ  
«ուրյակի» Երկրների մեծամասնությունը «այս  
կամ այն չափով փորձում է օգնել դարաբառյան  
հակամարտության կարգավորմանը»:  
Մասնավորապես, գործընթացում ակտիվորեն  
ներգրավված են Ֆրանսիայի նախագահ Ժակ  
Չիրակը, ԱՄՆ-ի ղեկավար Ջորջ Բուչը:

«Մենք շատ կուզենայինք, որ Աղբեջանն ու  
Հայաստանն ընդունելի լուծում գտնեն: Մենք  
լուծում չենք պարտադրելու ոչ  
աղբեջանական, ոչ էլ հայկական կողմին», -  
ընդգծել է Վլադիմիր Պուտինը:

**Ֆրանսիան պաշտպանում է  
Կենտրոնական Ասիայից Հարավային  
Կովկասի տարածքով Եվրոպա  
գազամուղի շինարարությունը**

ԹԲԻԼԻՍԻ, 17 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆրանսիան պաշտպանում է Հարավային Կովկասի տարածքով Կենտրոնական Ասիայից Եվրոպա գազամուղ կառուցելու գաղափարը: Այս մասին Վրաստանում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆիլիպ Լեֆորը հայտարարել է ՈՒԱ «Նովոստի»-ին տված հարցազրույցում:

«Կենտրոնական Ասիայից Հարավային Կովկասի տարածքով Եվրոպա ուղեգիծը չափազանց կարեւոր է, Ֆրանսիան, ինչպես եւ

Եվրոպայի մյուս Երկրները, շահագրգռված է այդ նախագծի իրացմանը», - հայտարարել է դեսպանը:

Նա նշել է, որ այդ նախագծի իրականացման դեպքում Ֆրանսիան ակտիվորեն կմասնակցի գազամուղի շինարարական աշխատանքներին, ինչպես դա արել է Բաքու-Թբիլիսի-Զեյխան եւ Բաքու-Երզրում խողովակաշարերի շինարարության դեպքում:

«Ֆրանսիան հանդես է գալիս դիվերսիֆիկացման եւ գագի եւ նավի սպասարկման եւ փոխադրման բոլոր աղբյուրների անվտանգության օգտին», - ընդգծել է դեսպանը:

**«Վեցյակը» ՍԱԿ-ի Անվտանգության  
խորհրդին է հանձնել Իրանի  
հիմնախնդրի վերաբերյալ  
առաջարկությունները**

ՍԱԿ, 14 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Դիմոցաբթի օրը ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդին է հանձնվել իրանական միջուկային հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ առաջարկությունների ամբողջ փաթեթը:

Այն մշակվել էր Եվրոպական «Եռյակի» (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա) կողմից եւ անցած անսպա սկզբին ՍԱԿ-ի ԱԽ-ի հիմք մշտական անդամների եւ Գերմանիայի անունց թերարանին էր հանձնվել Եվրամիության արտաքին քաղաքականության եւ անվտանգության գծով գերագույն կոմիսար Խավիեր Սոլանայի կողմից:

Այս համալիր ծրագիրը ներառում է տարբեր տնտեսական եւ քաղաքական խթաններ, որոնք առաջարկվում են Իրանին ուրանի հարստացման աշխատանքներից հրաժարվելու փոխարեն: Ըստ դիվանագետների, այն հիմք կղանա իրանական միջուկային հարցի վերաբերյալ բանաձեւի նախագծի քննարկան համար, որի շուրջ աշխատանքին Անվտանգության խորհուրդն անմիջականորեն ձեռնամուխ կլինի եկող շաբաթ:

«Վեցյակի» արտաքին գործերի նախարարները հուլիսի 12-ին Փարիզում կայացած հանդիպմանը որոշել են Անվտանգության խորհուրդը վերադարձնել իրանական «միջուկային դուստեն», քանի որ Թերարան այդպես էլ չպատասխանեց այդ առաջարկություններին:

**Միխեիլ Սահակաշվիլին Բաքու-Թբիլիսի-  
Զեյխան նավթամուղը գնահատել է  
որպես Վրաստանի ազատության եւ  
էներգետիկական անկախության  
գրավական**


Թբիլիսի, 14 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:  
Վրաստանի նախագահ Միխեիլ Սահակաշվիլին  
Բաքու-Թբիլիսի-Զեյխան նավթամուղը  
գնահատել է որպես Վրաստանի ազատության  
եւ էներգետիկական անկախության գրավական։  
Այս նասին նախագահը հայտարարել է ԲԹՁ-ի  
գործարկնան պաշտոնական արարողության  
ժամանակ, որը տեղի է ունեցել Թուրքիայի  
Զեյխան քաղաքում։

«Մեզ համար նավթամուղն ավելին է, քան  
տնտեսական եւ քաղաքական նշանակություն  
ունեցող էներգետիկական նախագիծ։ Մեզ  
համար ԲԹՁ-ն ունի պատմական  
նշանակություն ազատության եւ անկախության  
տեսանկյունից», - ասել է Սահակաշվիլին։

Վրաստանի նախագահի գնահատմանը,  
Բաքու-Թբիլիսի-Զեյխան նավթամուղի եւ Բաքու-  
Թբիլիսի-Էրզրում կառուցվող գազամուղի  
նախագծերը նշանակում են «մի դարաշրջանի  
ավարտը եւ նոր փոխհարաբերություններով  
նոր դարաշրջանի սկիզբը»։

«Այս նախագիծն այն սահմանն է, որտեղ  
ավարտվեց թելադրանքի տարրեր ունեցող  
քաղաքականությունը եւ համագործակցություն  
սկսվեց կողմերի շահերի հաշվառման եւ  
փոխադարձ հարգանքի հիման վրա», - ասել է  
Սահակաշվիլին։

Իր ելույթում Վրաստանի նախագահը մեծ  
ուշադրություն հատկացրեց վրաց-թուրքական  
հարաբերություններին եւ Թուրքիան անվանեց  
«Եղբայրական երկիր», որը «շատ արագ  
դառնում է Վրաստանի համար մեկ  
առեւտրական գործընկերը եւ նրա գլխավոր  
ներդրողը»։



Միջազգային

**«ՆԵՐՈՍԻՑ ԵՓՐԱՏ ԶԳՎՈՂ  
ԻՄՐԱՅԵԼ»**

**Միջազգային իիպերսիոնիստական շարժման  
նպատակները**

«Յանուն հայրենիքի» միջազգային  
իիպերսիոնիստական շարժման առաջնորդ Ավրոն  
Շնուլեւիչը մուկովյան «Զավտրա» թերթին տված  
ծավալուն հարցագրույցով խոսում է համաշխարհային մի շարք նախագծերի, շարժման կայսերական ծրագրերի, հակարեականության, «Երկրորդ Խաղարիայի» եւ այլ հարցերի մասին։

- Ո՞րմ է ձեր շարժման իմաստը: Ի՞նչ է նշանակում «հիպերսիոնիզմ»:

- Խրայելի իշխանական կառույցների մեջ մասը  
որեւէ ձեւով կապված է ամերիկացի գլոբալիստների  
հետ: Նրանց հարկավոր չէ ազատ Խրայել, նրանք  
նախընտրում են դաշնալ աշխարհաքաղաքացիներ: Ոմանք  
կարծեն թե հրեա են, բայց բնակարան ունեն  
Լոնդոնում, տուն՝ Փարիզում եւ այլն: Նրանց  
տրամաբանությունը հետեւյալն է. եթե Խրայելն  
անհետանա, եթե ամերիկացիները, ռուսները  
կործանվեն, ապա «մենք» թել Ավիվից, նյու  
Յորժից, Մուսկվայից հետությամբ կտեղափոխվենք  
ուրիշ մայրաքաղաք: Կան նաեւ ուղղափառ  
հրեաներ, որոնք ուզում են կյանքը կառուցել ըստ  
հուղարկանության սկզբունքների: Բայց նրանց  
«գետողյական» այլեւակերպը պահանջում է  
թաքնվել, չնիշամտել անգամ սեփական երկրի  
կյանքին: Մենք առաջարկում ենք երրորդ  
մոտեցումը, որ անհրաժեշտ է կյանքը կառուցել  
հրեական ավանդույթի հիման վրա, որ արեւմտյան  
աշխարհակարգը հանգեցնում է հուղայականության  
կործանմանը: Ուստի Խրայելը պետք է հարձակման  
անցնի: Մենք հանդես ենք գալիս խրայելական  
կայսրության ստեղծման օգտին: Նեղոսից Եփրատ  
ծգվող սահմանը տարածաշրջանի բնական  
աշխարհաքաղաքական սահմանն է: Մեր շարժումը  
ծգություն է հուղայականությունը դարձնել  
գաղափարախոսություն, քանզի այդ կրոնն առավել  
հարմար է հասարակության հետինդուստրիալ  
վիճակի համար։

- Այդ պատկերացումները շա՞ն հետեւրդներ  
ունեն Խրայելում:

- Բնակչության մեծ մասը մեզ համամիտ է: Բայց  
շատերը, ցավոք, չեն հավատում մեր նպատակների  
իրագործելիությանը:

- Այն սովորությունն է ստեղծվում, թե հսրայելը գաղափարախոսական ու բարոյական խոր ծգնաժամ է ապրում:

- Իսրայելն աշխարհի սիրտն է: Ուստի այդ տարածքի շուրջն առկա է ննան մեծ լարվածություն: Մենք ծանր ժամանակ ենք ապրում: Սա իին աշխարհի մահվան եւ նորի ծննդյան ժամանակն է: Արդեն քանի տարի հետո մեր զավակները կտևմնեն միանգանայն ուրիշ աշխարհ: Պարզապես Իսրայելում դա առավել հստակ է զգացվում:

- Այսօր Իսրայելն ստիպված է արձանագրել, որ «Համասը» դառնում է իր քաղաքական գործընկերը: Հասարակության մեջ պառակուում է հաստունանուում: Իսրայելցիներն զգում են, որ Ամերիկան ըստ էության կորցնում է հետաքրքրությունն իրենց տարածաշրջանի հանդեա:

- Այն, ինչ այսօր տեղի է ունենում Մերձավոր Արեւելքում, տարբեր նախագծերի բախման հետեւանքն է: Չնայած Արեւմտյան Եվրոպայի եւ Ամերիկայի հակասություններին, Արեւմուտքն այնուամենայնիվ միեւնույն ուժն է: Արեւմուտքն նախագիծը մնում է ուժի մեջ. նա ուզում է պահպանել իր գերիշխանությունը: Բայց ես կարծում եմ, որ դա նշանակում է զարգացման դադարեցում: Կա նաեւ այսպես կոչված հսլամիզմ: Տվյալ նախագիծը պահանջում է վերադարձնալ Մոլհամմեդ մարգարեի ժամանակների քաղաքակրթությանը: Այդ հսլամը ենթադրում է քաղաքակրթության զարգացման դադարեցում: Կա Չինաստան, որն առայժմ միայն փորձում է նախագիծ դառնալ:

Նախագծերից մեկն էլ իրեական քաղաքակրթության նախագիծն է: Տարագրության ժամանակաշրջանում հուդայականությունը ներանմփոփած էր: Յրեաների հայրենադարձման սինհիստական նախագիծը հուդայականությունը դարձրեց ողջ նարդկության համար նշանակալի հոգեւոր գործոն: Ընդսմին սինհիզմի գաղափարը սահմանափակ է՝ ստեղծել իրեաների ապաստան եւ չիսառնվել մյուս ժողովուրդների գործերին: Սինհիստներն ուզում էին սփյուռքի բոլոր իրեաներին հետ բերել եւ ստեղծել մի սովորական երկիր: Տավոք, աշխարհն այնպես է կառուցված, որ գետոտ-պետությունում նստած մնալը անհնար է: Արաբների առածն ասում է եթե չես ուզում գայլ դառնալ, շները քեզ կուտեն:

Յրեաները պետք է ընդունեն պատմության մարտահրավերը, դառնալով համաշխարհային ուժ: Մերձավորարեւելյան հակամարտությունն ինչո՞ւ է այսքան երկար շարունակվում: Բանն այն է, որ իրեաների եւ նրանց հարեւան արաբների կյանքը սահմանող որոշումները երուսաղեմում կամ

Ռամալլայում չեն ընդունվում: Դրանք ընդունվում են Վաշինգտոնում, Բրյուսելում, Պեկինում, Եվրոպայում, Զակարտայում՝ որտեղ ասես, միայն թե ոչ Մերձավոր Արեւելքում: Աշխարհում որոշ ուժեր շահագրգության հավերժացմանք: Բայց մենք պետք է տնօրինենք մեր ճակատագիրը:

Ուստանանային, օրինակ, ձեռնտու են նավի բարձր գները, ուստի նա գործ է բռնում միաժամանակ թե «Համասը» եւ թե Իսրայելի հետ: Նա շահագրգությած է արաբ-իսրայելական հակամարտության հավերժացմանք, Ամերիկան՝ նոյնպես, քանզի նրա համար տարածաշրջանը ռազմավարական կարեւորություն ունի: Քանի որ անհնար է ամերիկյան կայազոր պահել իսրայելական, եգիպտական կամ հորդանանյան յուրաքանչյուր քաղաքում, Ամերիկան ուզում է առաջացնել կառավարելի ճգնաժամ: Պաղեստինյան պետություն ստեղծելու գաղափարի գլխավոր շարժիք ուժն Ամերիկան է, որը մինչեւ օրս չի ճանաչում Իսրայելի մայրաքաղաքը, նրա 1968 թ. սահմանները:

Ամերիկացիները շահագրգությած են Պաղեստինի պետության ստեղծմանը, որն, ի դեպ, բացարձակապես անկենսունակ է լինելու: Իսկ կողքին կլինի Իսրայելը, որի լայնությունն ամենանեղ նասում 16 մղոն է: Նման տեսքով նոյնպես պետությունը չի կարող գոյատեւել: Ինքնավարության տարածքում 50 տարի ապրող արաբ բնակչությունը «դատապարտված է» պատերազմի, ինչպես արդեն երկու տասնամյակ մարտնչող չեչեն գրոհայինները:

Քանի որ Պաղեստինում տնտեսություն չկա եւ չի նախատեսվում (պատճառ արաբների կաշառակերությունն է), տարածաշրջանում կլինի լարվածության մշտական աղբյուր: Երկու կողմերին վերահսկելով՝ Ամերիկան կպահպանի ռազմավարական կարեւոր տարածաշրջանը: Իսրայելի բյուջեն ավելի քան 100 մլրդ դոլար է: Երեք միլիարդանոց ռազմական «օգնություն» հատկացնելով՝ ամերիկացիները վերահսկողության տակ են պահում Իսրայելի ռազմարդյունաբերությունը:

### - Ուրեմն Իսրայելն ամերիկա՞ն նախագիծ է:

- Ո՞չ: Իսրայելը իրեական նախագիծ է, 20-րդ դարուն մեր խոշորագույն նվաճումներից մեկը: Ժողովուրդը կորցեց իր պետությունը՝ ի հեճուկս գլխավոր համաշխարհային ուժերի (հիտլերյան Գերմանիա, ԽՍՀՄ, ԱՄՆ):

Խորհրդային Միության փլուզումը նշանավորեց ռուսական ազգայնական նախագծի, համամարդկային ինչ-ինչ հարցերի պատասխանող սահմանող որոշումները երուսաղեմում կամ

ռուսական քաղաքակրթության անկումը: Որևէ ստանդարտային ներկայիս ուղին փաստորեն ռեզերվացիայի ուղի է, որն առավել հարմար է եստոնիայի կամ Լիտվայի համար: Որևէ ստանդարտ (ինչպես եւ Խրայելում) ներկայումս կառավարող բուրժուազիան առեւտրական միջնորդի դեր է խաղում, վաճառելով երկրում արդյունահանվող նավթը: Որևէ ստանդարտային վերնախավն այլ բանի ընդունակ չէ: Խրայելը չունի բնական հարստություններ: Միակ «բնապաշտը» երկրի աշխարհաքաղաքական դիրքն է, որի վաճառքով է զբաղվում կառավարող ընտրախավը:

Որևէ ստանդարտ եւ Խրայելը կարող են համագործակցել: Խրայելում առկա է բարեհաջ վերաբերնունը Որևէ ստանդարտային, ռուսական մշակույթի մկատմամբ: Բայց ռուսների ազգայնական շարժումը զգալի չափով տոգորված է հակարեական նախապաշտություններով: Ժամանակին դրա հետեւանքով կործանվեց Որևէ ստանդարտ կայսրությունը: Իրականում հրեաները միշտ եղել են կայսերապաշտ ժողովուրդ եւ Ռուսաստանի պատմության ընթացքում դարեր շարունակ աջակցել են կենտրոնական իշխանությանը: Սակայն Ռուսական վարչությունը գահատումի ջանքերով հրեա երիտասարդությունը դարձավ հեղափոխության հարվածային ուժը: Այսօր նույն սխալը կրկնում են ռուս ազգայնականները, թշնամիներ հռչակելով հրեաներին եւ Խրայելին:

Յակարեականության գաղափարախոսությունը խիստ վնասում է Ռուսաստանին: Այն մոռացության մատնում երկրում գոյություն ունեցող խնդիրները: Եթե ռուսները կարողանան Խրայելին եւ հրեական հարցերին նայել առանց հրեատյացության ակնոցի, ապա հնարավոր կլինի շատ կարեւոր եւ փոխահավետ դաշինք: Կարելի է վերիիշել Մոլոտով-Ռիբենտրոպ դաշինքը: Եթե Յիտլերը, Յառլսինֆերի եւ իր հայրենակիցների մեծամասնության կամքին հակառակվելով չխախտեր այն, ապա չեին լինի ոչ Յոլոքոսի, ոչ էլ 2-րդ աշխարհամարտի արհավիրքները:

*- Ձեր կարծիքով, ո՞րն է «ռուսական ֆաշիզմի» պատճառը:*

- Դա նախագահի վարչակազմի հղացած իշխանական նախագիծ է: «Ռուսական ֆաշիզմի» ուրվականով ուզում են քողարկել իրավիճակը: Որևէ ստանդարտ կառավարվող կոմպրադորական բուրժուազիայի համար գլխավորը նավթային շահույթներից չզրկվելն է: Այդ նարդիկ կյանքում այլ բան չգիտեն: Իսկ ռուսների ազգայնական վերածնունդը, բնականաբար, կպահանջի նավթային եկամուտներն ուղղել ոչ թե առանձին անձանց գրպանները, այլ երկրի վերածնությանը, գիտության, կրթության, մշակույթի զարգացմանը:

Ուստի ներկայիս կառավարիչները կենսականորեն շահագրգուված են ռուսական ազգայնական նախագծի ոչնչացմանը:

Այս հարցում ռուսական «ընտրախավը» նման է իսլամիստներին: Իսլամի փորձագետներից մեկը մի առիթով ինձ ասաց. «Կարծում եմ, կզա օրը, երբ Կրեմլի պաշտոնյաներից շատերը չիրկիզմուղ պահարաններից կիանեն թասակները եւ «Ալլահ աքբար» կասեն»: Իսլամիստական նախագիծը շատ համահունչ է կյանքի զարգացումը սարեցնելու գաղափարին, ուստի ռուս դեկավարները շահագրգուված են ռուսական ազգայնական շարժման ճնշմամբ:

*- Հսե՞լ եք «Երկրորդ Խազարիայի» նախագծի մասին:*

- Խազարիայի առասպելի հեղինակը Լեռ Գումիլյովն է: Պատմական հայեցակարգի գրեթե բոլոր հեղինակները՝ Մարքսը, Թոյնբին, Գումիլյովը, եղել են հրեատյացներ:

Խազարիան (7-10-րդ դդ.) առաջին եկրասիական կայսրությունն էր: Խազարների մշակած կայսերական կառավարման տեխնոլոգիաներն զգալի չափով ժառանգեցին մոնղոլները, իսկ Ոսկե հորդայի կործանումից հետո դրանք անցան Ռուսական կայսրությանը: Խազարիան տարբեր ժողովուրդների շահերը ներդաշնակեցնող նախագիծ է:

Իս կարծիքով, «Երկրորդ Խազարիան» Ռուսական, Թուրքական եւ Յրեական կայսրությունների դրական համագործակցության տարբերակ է:

**Պ. Ք.**





## Կարօն մեր մէջ է

ՄԱՍՈՒՉԵՅՐ ԲՎԱԽԻՐ

**Պարսիկ մտաւորական Սամուչեհր Բասիրից  
ստացել ենք ետեւեալ յօդւածը՝ իրանահայ  
պարսկագիր շնորհալի բանաստեղծ Կարոյի  
մասին (Կարօ Տէրտէրեան):**

Կարօն, որի գործերը նախքան իրանի  
յեղափոխութիւնը աւելի քան քառորդ դար  
իրանի ժամանակակից գրականութեանը  
հետեւողների մօտ ամենասիրած ու  
ժողովրդական բանաստեղծութիւններից էին  
համարուում, աւելի քան 25 տարի է, ինչ  
բնակուում է ովկիանոսի միւս ափերում եւ  
գրեթէ մոռացութեան է մատնել իրանցի եւ  
իրանահայ նոր սերնդի մօտ:

**Շնորհալի ու ցաւատանց բանաստեղծը իր  
ժողովրդական սէր ու իրչակ վայելող երրոր  
(նորոգ հանգուցեալ) երգի վիզենի հետ  
մօտիկ ամցեալում իրանական  
ժամանակակից արևստի երկնակամարի  
մշտափայլ աստղերն են եղել: Սոյն յօդւածով  
հեղինակը վարակիչ կարօսով յորդորել է  
վառ պահել Կարոյի յիշատակը, որպէսզի նոր  
սերունդն էլ հաղորդի Կարոյի  
բանաստեղծութիւններին, որոնք ունեն  
մնայուն արժէք եւ այժմէական են բոլոր  
ժամանակների համար, քանի շնչող ու  
զգացող մարդու հետ է անարդարութիւնն ու  
գրկանքը:**

**Յօդւածը ներկայացնում ենք ամփոփ կերպով:**

ԽՄԲ.

Շնորհալի եւ արժանաւոր բանաստեղծ Կարոյի  
մասին Ձեզ՝ «Ալիք» օրաթերթի խմբագրութեանն  
եմ յանձնում մի յօդւած: Դուք Կարոյին ինձանից  
լաւ էք ճանաչում: Իմ կարծիքով՝ նա այնքան  
մեծ է, որ պէտք է աւելի գրի իր մասին,  
որովհետեւ յեղափոխութիւնից յետոյ իրանում  
հասակ նետած սերունդը նրան չի ճանաչում: Օստարութեան մէջ Կարոյի նմաններին շատ  
դժւար է անցնում: Նւազագոյնը այն, որ եթէ մի  
յօդւած իր մասին տպագրի եւ ինքը կարդայ,  
կուրախանայ դրանով: Կարոյին մենակ մի  
թողէք:

Յարգամօք՝ Բասիր



Բանաստեղծ Կարօ Տէրտէրեանը Վիլիամ Սարոյեանի  
հետ՝  
1972 թ. Թեհրանում

Իրանի երիտասարդ սերունդը, նոյնիսկ  
իրանահայերը Կարոյին լաւ չեն ճանաչում եւ  
նրա զգացմունքների ու խոհերի վեհութեան  
մասին տեղեկութիւն չունեն: Նրանք չգիտեն, որ  
նրա բանաստեղծութիւններն ու արձակ  
գրութիւնները ինչ աղմուկ էին առաջացնում  
մտաւորականութեան եւ սովորական ժողովրդի  
մէջ: Մենք զարմանում էինք, որ ինչպէս է, որ մի  
հայ այն աստիճան տիրապետում է  
պարսկերնին, որ իր ստեղծագործութիւնները  
դասում են իրանի ժամանակակից  
ամենաանւանի բանաստեղծների շարքը: Կարօն  
պարսկերն էր գրում եւ  
բանաստեղծութիւն ու արձակ գրելիս՝ օգտուուն  
էր ամենապարզ բառերից, որպէսզի նախ եւ  
առաջ կրօնի եւ ազգութեան  
տարանջատութիւնը պակսեցնի եւ ապա  
կարողանայ յարաբերութիւն ստեղծել շուկայի  
ու իրապարակի ոչ-մտաւորական մասսաների  
հետ: Մենք նրա գործերը կարդում ու  
արտասում էինք եւ անհամբերութեամբ

սպասում	նրա	յաջորդ
ստեղծագործութիւններին:		
<p>Կարոյի բանաստեղծութիւնը չէր սահմանափակում միայն սիրային սովորական դարձած կրկնութիւններով, որովհետեւ նա ցալի ու տաճանքի զաւակն էր եւ մի խօսքով՝ չարքաշների արևստագետը. դեռ, ինչպէ՞ս էր կարող ընչազուրկների կեանքի այն բոլոր ահաւոր իրականութիւնները անտեսել՝ զրիելով եարոց աչք ու յօնքի գովաբանութեանը: «Եղբայրս՝ Վիգենը» գրքում նա գրում է. «.... Ես չգիտեմ մարդկային բառապաշարում աղքատութիւն բարից աւելի ցաւալի ու դիւրաբեկ մի բառ կը գտնի՞: Ես եւ Վիգենը միասին ունեինք մեկ շալւարի «ծաղրանկար» եւ մեկ զոյգ «ջղային» կօշկներ, որոնց մէջ յաճախ ոտքի մատները կօշկից դուրս էին «կենում»: ... Կարօն ուս նշանաւոր գրող Գորկիի եւ Ֆիլմաշխարհի հանճար Չառլի Չապլինի եւ բազմաթիւ ուրիշ մտաւորականների պէս ինքնուս էր եւ կեանքի դպրոցում էր կրթել եւ այդ պատճառով՝ նրա ստեղծագործութիւնները կարող ենք բանուր դասակարգի արևստի եւ գրականութեան շարքը դասել: Նրա հայրը գորդի առեւտրի միջոցով էր ապրում: Կարօն երբ նկատեց, թէ ովքեր են գործում գորդը եւ դրա շահը ում գրպանն է մտնում, ամբողջ եւրեամբ տրտմութեամբ ու գարշանքով համակելով՝ գրեց.</p>		
<p>«... Խենթանալու աստիճան զգում եմ, - կեանքից, ոչ Ոչ էլ մահից. Կարպեսից... գորգից»:</p>		

«... Ջամադանում տեսայ... ոչ թէ մանուկ ժամանակ, ոչ... յետոյ տեսայ այդ՝ մարդկային եւրեան հիւսւածքը. կարպետի հիւսւածքի թելերի<sup>1</sup>) փոխակերպող արհեստանոցները..., Ուզում եմ ասել այդ գորգագործութեան արհեստանոցները տեսայ ու տեսնելուս գուգընթաց՝ լսեցի՝ արհամարհած, ամօթսած, անարձագանգ ու «նոտա»-ին անտարբեր երգը գորգագործների, որոնք երգելով՝ մի դեղ գործ էին գործում գորոզ կօշկատակերի զալիք օրերի համար, որոնք անծանօթ են զայրոյթին»: Ինչպէս տեսնում էք, Կարօն այս մի քանի տողով անում է նոյն Մոհամմադալի Աֆղանիի<sup>2)</sup> «Տանջանքի հիւսւածքը» խոշոր վէպի գործը: Ինչքան որ յիշում եմ, Կարօն ժողովրդական բանաստեղծ էր, ոչ՝ պէտական եւ իր ստեղծագործութիւններում մեկ բառ քննանք չկար իշխանութեան նկատմամբ: Իր եղբայրը

Վիգենը, արտասահմանում ունեցած հարցազրոյցներում յաճախ խօսում էր արևստագետի անկողմնակալութեան մասին, բայց կարօտախտը խեղդում էր իրեն եւ տիրութեան երանգով գունաւորում իր երգը: Սակայն Կարօն իմ տեսակետից համաշխարհային բանաստեղծ էր, քանի որ իր բանաստեղծութիւնների ծիրը անցնում էր ցեղային ու ազգային սահմաններից եւ խօսում էր ամբողջ աշխարհի հետ: Տգեղ աղջկայ մասին գրած նրա բանաստեղծութիւնը գեղեցկութիւնից գուրկ աղջկայ սրտի ցաւը պատմելուց առաւել փիլիսոփայական ու քաղաքական կողմեր ունի: Այդ պարզ քառեակով Կարօն փիլիսոփայորէն արծարծում է գեղեցկութեան ու տգեղութեան հարցը կամ, աւելի լայն առումով, բարիքի, չարութեան եւ Աստորյ հզօրութեան իմաստը եւ խորանուն խնդրի մէջ:

Կարօն տրտում էր եւ տրտմութիւնը նրան ինքնասպանութեան դիմելու աստիճանին հասցրեց, եւ այդ տրտմութիւնը որոշ չափով բնական երեւոյք էր: Իրանի նախկին վարչակարգում ապրող յանձնառու բանաստեղծը չէր կարող տրտմութիւնից փախչել: Միբէ ուս նշանաւոր գրող Գորկին չփորձե՞ց ինքնասպան լինել, չեխ նշանաւոր գրող Կաֆկան էլ տառապում էր մշտական տրտմութեամբ: Նա էլ Կարոյի նման իր ապրած հասարակութեան փոքրամասնութիւններից էր, այն էլ իր ժամանակի հակահրեայ Եւրոպայի մթնոլորտում: Ես քանանէկ-երկու տարեկան էի, երբ կարդում էի Կարոյի գործերը, այսօր երբ 40 տարի անց կրկին կարդում եմ, զարմանում են իր ընդարձակ գիտելիքների ու արևստի գորեղութեան նկատմանք եւ յուգում: Այն ժամանակից, երբ ջանացել եմ գործերս տպագրել, հասկացել եմ գրչի մարդկանց կրած տառապանքները՝ բռնի յետամնացութեան մատնած մի հանրութեան մէջ: Գրողը կամ թարգմանիչը տարիներ վազում է մինչեւ հազար ցաւ ու չարչարանք կրելով՝ տպագրել տայ մի ստեղծագործութիւն եւ յետոյ երբ տպագրում է, շահը հոսում է յարգելի հրատարակչի գրպանը. այդ կարգի համաձայն գրչի մարդը մի կողմից ենթարկած է մնում իշխանութիւնների ու գրաքնչական պատասխանատուութեան եւ միւս կողմից հասարակութեան ճաշակին, որը տարբեր պատճառներով հանգիստն ու անորակութիւնը աւելի է սիրում: Երկար ժամանակ է, ինչ Կարոյի գործերը այստեղ

տպագրում ու վաճառում են անհաշիւ կերպով եւ ինքը՝ Կարօն օտարութեան մէջ մի պատառ հացի համար դոներ է մաշում: Այս թէ ինչքան դժւար է բարձր տարիքում արտագաղթելը, այն էլ Կարոյի նման բանաստեղծի համար, որը ամբողջ էութեամբ զգացնունք էր ու սէր էր տածում իրանի ամէն մի թիզ հողին: Վիզէնի յուղարկաւորութեան ֆիլմում Կարօն խիստ արտասում էր. չէ՞ որ կորցրել էր թէ երօրը, եւ թէ ընկերոջը... Երբ Կարոյի բանաստեղծութիւնը միախառնում էր Վիզէնի ձայնին, մէծ ոգեւորութիւն էր ստեղծում, որի օրինակը մենք լսում ենք «Լալայի» (Օրօր) եւ ուրիշ երգերում: Երկու եղբայրներն էլ օտարութիւնը չէին սիրում:

Վիզէնը անգամներ իր հարցագորոյցներում ու երգերում բացայաց կերպով յիշում էր իրանը եւ ասում, թէ ցուրտ է այնտեղ, քո հայրենիքը չէ: Պարզ է, որ օտարութիւնը օր ծերութեան ինչ օրի է մատնելու Կարոյին: Երբ լսեցի անւանի գրողներ՝ դոկտ. Յասան Յոնարմանդիի եւ Էսլամ Քազեմիի կեանքի արէտալի վերջաւորութեան մասին՝ Ֆրանսիայում, սարսափեցի ու մտահոգւեցի միւսների ճակատագրի համար՝ ոսկու եւ ուժի այդ հասարակութեան մէջ: Դիտէք Ֆրանսիայի եւ Ամերիկայի խառնակութիւնները, թէ ինչպէս զրկւած մասսաները ճնշում են պատառ հացի համար եւ համաձայն գերմանացի ինմաստատէր բանաստեղծ Բրեխտի՝ վայ նրան, ով բարի դէմք ունի... Կարօն զրկւածների ճիշն է, խեղճ ու անօգնական մայրերի արցունքը, Կարոն փողոցների եզրին՝ գրավածառների կորած կրպակներում է, շահանոլ հրատարակիչների ճանկերում, իս սերնի սրտի ու յիշողութեան մէջն է: Արդեօք նստել՝ սպասում ենք, որ Կարոյի մահից յետոյ ինչ-որ յուշերեկոյ կազմակերպե՞նք իր համար...

15.11.2005 (1384.8.24)

Յայերէնում՝ առէջք ու թեզանիք (պարսկ. թարօփուր):  
2)-ժամանակակից նշանաւոր վիպագիր իրանցի:

**Ասոմային էլեկտրակայանի 30 կիլոմետրանոց գոտում ռադիացիոն մոնիտորինգի տվյալները գտնվում են նորմայի շրջանակներում**

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Յայկական ատոմային էլեկտրակայանի 30 կիլոմետրանոց գոտում Փոնային գամնա ռադիացիոն մոնիտորինգի տվյալները գտնվում են նորմայի շրջանակներում:

ՀՀ բնապահպանության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Արծորուն Պեպանյանն «Արմենպրես»-ին ասաց, որ ի պատասխան վերջին շրջանում նկատվող մտահոգությանն այս հարցում՝ Յայաստանի հիդրոուժերեւութաբանության եւ մոնիտորինգի պետական ծառայությունը չափումներ է իրականացրել, որոնք վկայում են, որ հուլիս ամսին այն տատանվել է 15-17.4 միկրոռենտգեն/ժամ միջակայքում: Միջազգային չափանիշներով՝ թույլատրելի ամենաբարձր սահմանը ժամում 27 միկրոռենտգենն է:

Ա.Պեպանյանից տեղեկացանք նաեւ, որ հուլիսի 14-ին, երբ ատոմային էլեկտրակայանի սեփական կարիքների սնուցման էլեկտրական մասում նկատվել են լարման շեղումներ, ռադիացիան 16 միկրոռենտգեն/ժամ է եղել, որը, մասնագետների վկայությամբ, չի կարող բացասական հետեւանք ունենալ բուսական, կենդանական աշխարհի, մարդկանց առողջության վրա:

### **Յայ բռնցքամարտիկներն առաջին հաղթանակներն են տարել բռնցքամարտի Եվրոպայի առաջնությունում**

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈՒԼԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Յայաստանի բռնցքամարտիկներն իրենց առաջին հաղթանակներն են տարել հուլիսի 14-ին Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում մեկնարկած բռնցքամարտի Եվրոպայի առաջնությունում: Եջմիածինցի, 75 կգ քաշային Անդրանիկ Յակոբյանը հաղթել է անգլիացի Զեյմն Ղեգելին, 69 կգ քաշային, վաճառորդի Սամվել Մաթեոսյանը՝ հունգարացի Իշտվան Շիլիին, իսկ 48 կգ քաշային, երեւանցի Յովհաննես Դանիելյանը՝ մոլդովացի Վյաչեսլավ Գոյանին:

Դիշեցնենք, որ այս մրցաշարին թիմի գլխավոր մարզիչ Ռաֆայել Մեհրաբյանի ղեկավարությամբ մասնակցում են Յայաստանի ինը մարզիկներ, մրցամարտերը վարում են ան Յայաստանի մրցավար, երեւանցի Սուրեն Ղազարյանը: